

3615

281.6

F-49

1907

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

281.6  
2-49

ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ԵՐԵՄԻՑ

(ԴԻՄՈՒՄՆ ԱՌ ԳԵՐ. Տ. ՅՈՒՍԻԿ ԵՂԱ. ՄՈՎՍԻՍԵԱՆ)

ԹԻՖԼԻՍ

281.6

Բ 49

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ԵՐԵՍԻՑ

Խոստ  
31403

(ԴԻՄՈՒՄՆ ԱՌ ԳԵՐ. Տ. ՅՈՒՍԻԿ ԵՂԱ. ՄՈՎՍԻՍԵԱՆ)


525

767

ՀԲԱ

ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՔՏՐԱԿԱՐ ՑՈՒՄԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ, ՊՈԼԲ., 7.  
1907 (25)



17589-59

## ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՍԻՑ

Հայ կրօնաւորութեան անլուր տառապանքի և  
առսկման օրերում, երբ մեր սրբազն ուխտի լրումն, մեր  
յաւաղոյն հասակի ողեռութեան առարկան՝ Մալր  
էջմիածինը ներսի ու դրսի, յայտնի ու գաղտնի հա-  
րուածներով քանդում, բրիշակ է գառնում, մենք կրօ-  
նաւորներս մեր կոչման զիտակցութեամբ պիտի ծու-  
արուեինք Լուսոյ Մօր թեւերի տակ, չերժանալինք  
նրա ու միմեանց սիրով, պաշտպանէինք զիրար ար-  
տաքին ու ներքին թշնամեաց դէմ, պատկառելի  
ոյժ գառնալինք, որին միշտ յարած մնար մեր անօգնա-  
կան ժողովուրդը, իսկ օտարը, թշնամին փշաքաղեալ  
քաշուեր:

Սակայն իմ այս չերժ ցանկութիւնը իրականութիւն  
չ' գտաւ, որքան էլ զրեցի, կանչեցի, աղաղակեցի, այլ  
թեաւորեալ ցնորք՝ որ ինձնից խոյս տալով թուաւ ու  
հեռացաւ:

Երեք տասնեակ տարուց աւելի „Մշակ“ օրա-  
գիրը մտրակողական մի դաժան ուղղութեամբ հանդէս  
եկաւ և սկսեց մտրակել Հայոց եկեղեցին, հայ եկեղե-  
ցականութիւնը, հայ ժողովուրդը, այն ամենը՝ ինչ որ  
„Մշակ“ խմբագրողների քմահանոյքին և շահուց հա-  
կառակ էին: Հասուն, խոհական հայութիւնից յոյս չու-



նենալով, „Մշակը“ իւր ոյժը ահաս, դեռ աշակերտող սերնդի մէջը հաստատեց. նա մարակ ու խարազան բաժանեց խելքն ու խիղճը դեռ չ'կազմակերպուած չահիլ շարքերին և սկսուեցաւ խարազանումն, ընդհանուր մարակումն:

Ամենայն մարակով՝ որքան և ախտաւորութեամք լի, հոչակուեցաւ ագասամիտ, լուսամիտ, ընտիր, ուսեալ, բարձր, արժանաւոր: Մարակը մեռցրեց սէրը, սպանեց պատկառանքը, վանեց համերաշխութիւնը, չլատեց միութիւնը, ոտնհարեց սրբութիւնը, դադանացոց ամբոխը:

Ուրիշ բնչ կարելի էր սպասել մարակից:

Մարակուեցան ծնողները սիրասուն գաւակների ձեռքով, բարերարները՝ բարերարուածների ձեռքով, ուսուցիչներն՝ աշակերտների ձեռքով, մայրերը՝ դուստրների ձեռքով, հայրենի տաճարը՝ աղօթաւորների ձեռքով, քահանան՝ իւր հոգևոր զաւակաց ձեռքով:

Մշակական մարակը հայրապետական վերջին երեք ընտրութեանց ժամանակ, ինչպէս և հոգաբարձական ընտրութեանց օրերում, հետզհետէ զարգանալով նախ գալանակ դարձաւ, ապա և հրազէն: Այժմ միտնախ սոսկալի գաւաղանահարութեան գաղն զգացին մարակի հեղինակները, երբ իրենց հարազատ զաւակներն զնմանութիւն հօրն բերելով՝ իրենց հարց կաշուի վրայ փորձեցին մարակների ոյժը: Այդ ցաւից վժացող հայրերն այժմ բողոքում են մարակի դէմ. բայց միան այն մարակի դէմ միան այդ հաղածեալներին ու պաշտպանուելը և երբեմն այդ հաղածեալներից մէկն ու մէկին յաջողութ էր խլել մարակը անդութ խարազանողից և նրա իսկ զիմին չարգել, այն էլ հոգու, սրտի հակառակ, ակամայից:

Այս անսփոփանք մարակուածներին իւր առաս-

սիրովն սփոփելու, հաւասարով և յուսով դաստիարակելու, անբարովականացնող մարակի ազդեցութիւնը թուլացնելու միակ հաստատութիւնն ու դաստիարգը Ա. Էջմիածինը և հայ հոգևորականութիւնը պիտի լիներ բատ կոչման:

Բայց մէր օրերը հիւանդացած կոչման օրեր են. ուստի և Էջմիածնի նուիրական գաւկիթը լայն բացու եցաւ Մշակական մարակուների առաջ, մարակ ու վեղար, խարազան ու վերարկու իրարից անբաժան իրեր դարձան և սկսուեցաւ ընդհանուր մարակումն: Մըրակակել սկսաւ հայրապետան իւր եպիսկոպոսներին, եպիսկոպոսներն՝ իրենց վարդապետներին, վարդապետները՝ սարկուադներին և ընդհակառակն. մարակն սպանեց սէրն ու միաբանութիւնն Ա. Էջմիածնում և նրա այս օրուայ առերը ծնաւ:

Ցաւալին, նշանակալիցն ու միւնոյն ժամանակ շտու հասկանալին այն է, որ մարակը անարժանների, բոնաւորների և ցածերի ձեռքումն էր երեսում միշտ, իսկ մարակուներին բաժին էր մնութ միայն աղաղակելն ու պաշտպանուելը և երբեմն այդ հաղածեալներից մէկն ու մէկին յաջողութ էր խլել մարակը անդութ խարազանողից և նրա իսկ զիմին չարգել, այն էլ հոգու, սրտի հակառակ, ակամայից:

Այս ընդհանուր աւասութիւնից յետով, որի նշմարատութիւնը ոչ կարողէ հերքել, ես ձեզ եմ զառնում, գերապատիւ սրբազան հայր, Տէր Յուսիկ մաքակաւոր եպիսկոպոս:

Զեր անարգար ու դաժան մարակի դաղը Կարապետի պատի վարդապետի պայման գէմքին կսկիծ դառաւ և

ինձ համար, որ չեմ դիմանում ամենայն անիրաւութեան, թէկուղ այդ անիրաւութիւնը արիւնարբութշնամուս վրայ տեղայ: Էշմիածնի սիրոյ աղբիւրը ցամաք գտաք երկե և կամ ծեր սրախ մէջ, ուր նախանձ ու ատելութիւն է զիգուած, սէր տեղաւորելու մի անկիւն չգտաք, Դուք ծեզ հետ՝ իբրև առաջնորդական պաշար, „Մշակի“ նուիրած մտրակը ասրաք Երևան և ծեր հարուածի անդրանիկ զոհն այս անդամ Կարապետ վարդապետն եղաւ:

Խում եմ որ Աստրախանի իմաստուն ժողովուրդը Կարապետ վարդապետից աւելի ծեզ է գերազանել և Դուք պիտի առաջնորդական պաշտօնով այնտեղ երթաք: Որպէս դի մի ուրիշ շնորհալի վարդապետ չընկնի ծեր անարդար մտրակի տակ նոր առաջնորդավայրում, ես պարագս եմ համարում, հաւատացէք, հակառակ ցանկութեանս, մարակը խլել ծեր ծեռքից, որ դուք՝ եթէ գնալու լինիք Աստրախան, հովուական կաւազանով և սիրոյ խաչով դնաք այնտեղ և մեզ նման անարժան վարդապետներին օրինակ լինիք:

Այս մի երկու խօսք նախքան բուն խնդրին անցնելը: Ձեզ քաջ յացանի է, սրբազան հայր, թէ ես անձնականապէս Տ. Կարապետ վարդապետից շատ վիրաւորանքներ եմ կրել, նոյն խսկ զրկանքներ, մինչդեռ Դուք ինձ մի այնպիսի զրաւոր վկացութեամբ էք ներբողել, որ զիս անձնականապէս երախտապարտ է կացուցանում Ձեզ:

Ապա ուրեմն խնդրում եմ անձնական ատելութեամբ չբացատրէք զիմումս Ձեզ, այլ իբրև մի կակտագին նիչ՝ Ձեր խսկ անարդարութեան երեսից:

Սրբազան հայր, Կարապետ վարդապետի առաջնորդական գահը գրաւելուց յետոյ իբրև նրա յաջորդ, Դուք անմիջապէս Ձեռք զարկիք ծեր նախորդին արատաւորել մի լրազրական յօդուածով, որ տպագրել էք իր ժամանակին «անհառագայթ Արշակոյ» թէրթի 61-րդ համարում: Այդ յօդուածը ես չեմ կարդացել, բայց նրանում շարած ծեր անսիրտ և անսրդար մեղագրանքներին, որ առատօրէն թափում էք Կարապետ վարդապետի դլխին, ծանօթացել եմ նոյն վարդապետի „Հովուի“ անցեալ տարուայ 17, 18, 19 համարներում զետեղած «բացատրութիւնից»:

Պարզապէս նկատում է որ Դուք Կարապետ վարդապետին մեղագրում էք կեղծ փաստաթղթեր յօրինելու մէջ, և դրամ դաղելու մէջ: Այն Կարապետ վարդապետին, որ թրքական հրաշէկ գնդակների առջև թէ երևանում ու թէ Գողթնեաց սարեր ու ձորերը չափչվելով իւր ժողովրդին սիրտ էր տալիս, մխիթարութիւն բաժանում: Եւ միթէ Կարապետ վարդապետը իւր կեանքի գնով ուղղում էք մի քանի արծաթ դաղել: Այստեղ ակամացից միտս է դալիս նորագոյն փիլիսոփաներից մէկի խօսքը թէ. «Բարիք անել և իւր վրայ զրպարտութիւններ լսել՝ արքայական բաժին է»: Եւ իմ կարծիքով, սրբազան հայր, Դուք այդ «արքայական բաժինն» էք տալիս Կարապետ վարդապետին: Բայց չեղուիմ:

Կարապետ վարդապետը իւր «բացատրութեան» մէջ Ձեր հաշուարարական ընդունակութիւնը ե՞ որ զլխաւորն է, Ձեր սիրտը չափելով հանդերձ, Ձեզ սրբազան հայր, անուանում է զրպարտիչ, խնդրում է

ձեզ դիմել ուր հարկնէ և քննութիւն նշանակել Զեր ակնարկած զեղծումների համար ու պատժել տալ իրան։ Այս Ձեզ զբեթէ մեղադրումէ զողութեան մէջ լիշելով Ձեր հանապարհորդութիւնը Քիշնեաց Պետեր-բուրդ, որ նատել է 1462 ռուբի, պահանջում է որ սինօդում նորից քննել տաք Ձեր հաշիւների գործը։

Բայց Դուք լրեցիք. ոչ զրպարտչի անունը մերժեցիք ձեզնից, ոչ հաշուեմատեաններն ու զործերը քննել տուիք և ոչ 1462 րուբու մասին խօսեցիք։ Կարապետ վարդապետի մեղադրանքները թուերի և մատեանների վրայ են հիմնուած, ուրեմն և սովորական զրպարտութեան կամ փողոցալին բամբասանքի բնաւորութիւն չունին, որ արհամարհէիք։ Ուրեմն ինչու լրեցիք։

Առ հասարակ Կ. Վ. «Բայցարութիւնը» կարդալիս այս պատկերն աչքիս յանդիման եկաւ։ Կարապետ վարդապետը իւր ամբողջ ժանրութեամբ ձեղ վրայ է ընկել և ննշում է ձեզ, իսկ Դուք ձեզ ազատելու համար ոչ մի ժամն չէք հանում, որ ոչոք ուշը չգարձնի։

Իդէպ. զարմանալի է որ ս. սինօդը ուշը չի դարձրել Կարապետ վարդապետի ցուցմանց վրայ, մինչդեռ Յուսիկ Եպիսկոպոսի ցաւցմունքն ընդունելով՝ Կ. վարդապետին նախշել հրամայեց «Արարատի» մէջ (Հ. դեկտ. 1906)։

Արդի, սրբազան հայր, ինկատի ունենալով Կարապետ վարդապետի «Բայցարութիւնը», Ձեր լուսութիւնը և հաշուեփախութիւնը, ես գալիս եմ այս եղանակացութեան թէ Կ. Վ. զեղծումները չեն իսկական պատ-

ճառը, որի համար Դուք սկսաք մարակել նրան հայրաբար, հէնց որ Երևան մաաք: Խսկական պատճառը, հողեբանական պատճառը ուրիշ է իմ կարծիքով և ես նրա բայցարութիւնն այսուել կ'զնեմ։

Մեր եկեղեցական ս. հարց մէջ կան ոմանք, որ պաշտօն ստանձնելիս հարկ անհրաժեշտ էն համարում մարակել անմիջապէս իրենց նախորդին, վարկարեկ անել նրան ժողովրդի մէջ, իշխանութեան առաջ: Այս նպատակին համար նախանձն ու եաականութիւնը հարուածների մէջ խարութիւն չեն գնում, խարազանում են, զրպարտում, բամբասում, սպիտակը սե ներկում։ Քանի առաւել աչքի ընկնող է նախորդը իւր բարեմասսութիւններով, քանի առաւել սիրելի յաչս ժողովրդեան, անքան աւելի խիստ ու դաժան են փոքրովի մարակողի հարուածները։

Դուք էլ, սրբազան հայր, այս հանապարհովն էք ընթանում, այսպէս սկսում ճիշտ ձեր նոր պաշտօնները։

Մի շատապէք խնդրեմ զրպարտութեան մէջ մեղադրել զիս, իմ տեսութիւնս ես ձեր թղթերովն եմ ապացուցանելու։

Զոր օրինակ Քիշնեաց կալուածոց կառավարիչ գառնայով գուք ձեր 1894 թ. սեպտեմբեր 30 (Հ.-ը չկայ) գրովն ի սինողն վարկարեկ էք անում ձեր նախորդ համազասպ վարդապետին։ Երկու ուրիշ թղթերով, որոնց սեւերի վրայ տարեթիւն ու համարը չկան (մոռացմամբ արգեօքը) գուք վարկարեկ էք անում սինօդի աչքում հանգուցեալ Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանին, Ձեր նախորդ կառավարչին թեմի ե՝ չա-

նալով առաջնորդական մի կտոր գետինը նրա ձեռքից հանել էջմիածնին վերապահելու պատրուակով, Դուք վարկ ու վստահութիւն էք շահում բարձրագոյն իշխանութեան առաջ: Այդ թողթը վերջանում է հետեւալ տողերով. «Թողուլ զայս մասն կալուածոյն այսպէս զիան համարիմ շահուց Մայր աթոռոյ և մրտանել վիճակաւոր առաջնորդի բնդ վարձաւոր հրէայս ի յարաբերութիւն անպատճութիւն բարձր կոչման նորին»:

Ի դէպ. բայց երբ Դուք առաջնորդական խալիչն սրբազն Աղափիրեանի տակիցը քաշեցիք, կարուածների կառավարութիւնն էլ ձեր ձեռքը պահեցիք չեղուացներով նուև կոնսիստորիան, դուք ձեր 4—5 ամեայ կեանքն անցուցիք «բնդ վարձաւոր հրէայս» և այդ անպատճութիւն չհամարեցիք:

Բայց զայս ասասցուք իւրումն տեղուց:

Այսպէս ուրեմն Դուք ձեր նախորդներին անուանարկելու սովորութիւնն ունենալով, Երևան հասնելիս, Կարապետ վարդապետի աթոռի վրայ ձեզ անցիք զգացիք: Կարապետ վարդապետը վարկ էն բարձրացների նրա զիանի, ոչ էլ պատրւագուրի կմնայ. բայց նրա արգի վիճակը արատաւորում է հէնց Զեզ, ամօթ է բերում ո. էջմիածնին:

Կան վարդապետը, բոլորից բարձրը»: Յիշո՞ւմ էք այդ օրերը:

Զեր մտրակների աղդեցութիւնը Կարապետ վարդապետի բարի վարկի վրայ ո՛չ մի հեաք չ'թողաւ, հարկաւ իւելօք և աղնիւ մարդկանց աչքում. բայց կրօնաւորների գէմ յարուցուած այս հալածանքի օրերում մէջ հարուած եղաւ նրա համար: Զեր մրարակի նշանով ոգեսրուեցան ձեր բարեկամ կրօնաւոր մտրակաւորները և նեմարանի նախկին տեսչին, Երևանի նախկին առաջնորդին ո՛չ միայն մի պաշտօն զլացուեցաւ, այլ ո. էջմիածնից, կրօնաւորական ասպարիղից գուրս վրանցուեցաւ նա և գնաց մի օտար, մասնաւոր զպրոցում ուսուցիչ գարծաւ: Կարապետ վարդապետը ոչ բաղցից կմէռնի, ոչ էլ պատրւագուրի կմնայ. բայց նրա արգի վիճակը արատաւորում է հէնց Զեզ, ամօթ է բերում ո. էջմիածնին:

Արդ, սրբազն հայր, կարծում եմ թէ ուղիղ բացագրեցի Զեր վարձունքը Կարապետ վարդապետի հետ: Զեր մեղագրանքները նրա զլխին նրա զորձերիցը չեն բղխում, այլ ձեր հիւանդ սովորութիւնից, նախորդին անուանարկելու սխալ հակամէտութիւնից:

Բայց այժմ անցնեմ ուրիշ հարցի. արդեօք Դուք ձեր նախորդներին ընդհանրապէս և Կարապետ վարդապետին մասնաւորապէս մտրակելու, կեղծիքի և շահամոլութեան մէջը մեղագրելու բարցական իրաւունքն ու բարձրութիւնն ունիք:

«Ա, յօ»-ն այն ժամանակ կասեք, Երբ որ բարեհանիք բացատրել հետեւալ հարցերի մի փոքրիկ շարքը, լուծէք այդ հանելուկները:

Ես այստեղ չեմ դնի այնպիսի հարցեր, որոնց մասին լուեն եմ սիրում, չեմ էլ ուզում շօշափել այս խնդիրը թէ ինչպէս եղաւ, որ Դուք տարիներ յառաջ Բեսարաբիոյ թէմի կառավարիչ նշանակուեցաք երբ այդ պաշտօնին միակ յարձարագոյնը համարուած էր յառաջանական իշխանակաց արժանի Տ. Նահապէտ եպիսկոպոսը։ Զէ, ես այսպիսի խնդիրների վրայ խօսողը չեմ։

Ա. Որովհետև Դուք, սրբազն հայր, մեղաղըում էք Կարապետ վարդապետին որ նա 65 կոպէկի մի հեռաղիր է առուել իւր եղբօրը ի հաշիւ հասարակաց գրամմերի, ես էլ հարցերիս առաջինը այսպէս եմ զրնում։ Դուք 1893 թ.—1895 թուականը ասում են կալուածոց կառավարիչ էք եղել միայն և ստանալիս էք եղել ոռնիկ միայն 800 ռուբլի ի տարին։ բայց ծեր ռուսաց լեզուի ուսուցչին տարեկան վարձ վճարած էք 400 ռուբլի։ Զեր մէկ եղբօրը Կամարնից կուտանք պահել տալու և ռուսերէն ուսուցանելու համար իւրաքանչիւր ամիս վճարումէք 50 ռուբլի, ուրեմն 600 ռուբլի ի տարին։ Զեր միւս եղբօրը 0-դեսսայում աստամարուժութիւն սովորեցնել տալու և պահպանութեան համար տարեկան վճարած էք 800—1000 ռուբլի։ դեռ չեմ ուզում հաւասար միանուադ տուած մի արտակարդ 700 ռուբլու լրին։

Ասացէք, խնդրեմ, ուղի՞ղ են այս ծախքերը։ Եթէ ուղիղ են, այդ ինչպէս կախարդական 800 ռուբլի է եղել ծեր ոռնիկը։ Սարեփիթացի կնոջ իւղի պուլիկի նման, որ երկուսից աւելի հազար դուրս դալով նրանից, էլի մնալիս է եղել ծեր ո՛չ միայն առաւտօ-

րէն ասլրելու, այլ և առատ պարզեներ տալու բժշկին և բարեկամաց 100 ռուբլի, ոսկէ ժամացոյց, ոսկէ շղթայ, նուազարան, ձեռնափայտեր, գնոջ «աէր ողորմեա» ևայն։

Բ. 1895—6 թուականից դուք իրու թեմի կառավարիչ սկսել էք ստանալ տարեկան 2000 ռուբլի ոռնիկ։ ինչպէս ուրեմն և ինչ աղբիւրից Դուք նոյն թուականին տեղոյս դրամատանը ունեցել էք պահեստի փող 9000 ռուբլի։

Սրգեօք ուղի՞ղ է այս։

Գ. Ուղի՞ղ է որ Դուք 1894 թ. Յունիսի 20, չ-30 զրով խնդրել էք սինօդին 600 ռուբլի զրամ աւելացնել կոնսիստորիայի ծառալողների ոռնիկի վրայի, ծածկելով սինօդից թէ մասպիր էք մինչև այդ ժամանակ չեղած մի պաշտօն հանճարել Զեր հարադար եղբօր համար և 600 ռուբլին նրան յատկացնել։

Զեր զրամ առաջադրութիւնը կոնսիստորիային 1896 թ. գեկանեմք. 7 չ-349 հաստատում է, որ այդ ուղիղ է։ Այդ առաջադրութիւնը ուրիշ բան էլ է առում. ինչպէս նկատում է անդամ քահանաները, որոնք ց'այդ օր զրադրութեան համար վարձ են ստացել 240 ռուբլի, երկուքը միասին 480 ռուբլի ի տարին, գժղոնել են ծեր կարգադրութեան դէմ, որ դուք ծառալողների անունով միայն սինօդից խնդրած յաւելումը ծեր եղբօրն էք յատկացրել, ուստի և Դուք նրանց սիրար շահելու համար ծեր նշանաւոր «առաջադրութեան» մէջ այսպիսի յօդուած էլ էք դնում։ «Ճէր Բարսեղ աւագ քահանայն Խաղաննեանց և բարեկրօն աէր-Սարգիս քահանայն Թաթօնիկեանց, լորոց

իւրաքանչիւրն ցալսօր ստանալը ի տարին 240 ռուբ-  
լի ռոնիկ գրազրութեան, ստասցին զայն դումար և  
յասմհետէ որպէս նպաստ՝ աղատ լինելով միանգա-  
մայն ի պարտաւորութենէ գրազրութեան»։ Այստեղ  
անշուշտ լիշած էք «արարէք ծեղ բարեկամս ի մամո-  
նայէ անիրաւութեան»։ Բայց դուք, սրբազա՞ն հայր,  
իրաւունք ունէիք աղատ համարելու զրադիր քահա-  
նաներին իրենց պարտաւորութիւնից և նրանց պէն-  
սիա կապելու ի հաշխւ ս. էշմիածնի։ Ի դէպ, երբ  
յետոյ սինօդի անդամ էք դառել, ասում են որ այդ  
պէնսիան հասցըրել էք 720-ի և սրբազրծել տուել  
սինօդի հրամանով, որպէս զի քահանայք «մի լիշես-  
ցեն դաւուրս անցելոյն»։

Բայց այս ամենը դեռ էական չէ. Էականն այս  
է թէ Դուք, սրբազա՞ն հայր, իբրև նախագահ կոն-  
սիստորիայի, իրաւունք ունէիք ծեր եղբօրը նոյն ա-  
տեանի մէջ պաշտօն աալու. չէ որ օրէնքի մէջ նա-  
խատեսուած է այդ բանը. արգեօք այդպիսի մի յօ-  
դուած չէք լիշում օրէնքից, որի դէմ է ծեր վար-  
ձունքը։

Դ. Ինձ յակտնի է թէ սրբազան սինօդը իրեն  
հասանելի զրամները մէկ կամ երկու ամիս ժամանա-  
կից ուշ ստանալու. համար, ի նկատի անդամ չի ու-  
զում ունենալ յապազման իրաւացի պատճառաբա-  
նութիւնը և առաջնորդներին վիրաւորական թղթեր  
էլ է արձակում։ Բայց ինչպէս բան է, սրբազան աէր,  
որ Դուք 1896 թուից, մինչև 1898 թ. Մայիսի  
վերջը, ալսինքն ծեր՝ Քիշնեից քաշուելու օրը, դուք  
մնացորդ էք պահել 4244 ռուբի 10 կոպ։ Զարմա-

նալի չէ, որ սինօդը ծեղնից ոչ այդ գեղջման պա-  
հանջն է արել, և ոչ 2 տարուայ տոկոսիքն է ու-  
զել, որովհետև այդ զեկուցումն դուք արել էք սինօ-  
դին, ծեր սինօդի անդամութեան նախօրեքին։

Ասացէք խնդրեմ ուղի՞ղ են այս բաները։

Ե. Ասում են որ Դուք Քիշնեից հեռանալու նա-  
խօրէքին 7 հատ թարմ պայման էք կապել աների  
ու խանութների վարձակալների հետ, որոնց համար  
Դուք անքան տարի էք կարել, որչափ իրենք են կա-  
մեցել, այդ իսկ պատճառով էլ դուք կանխավճարներ  
էք վերցըրել, որոց մասին պայմանաթղթերում խօսք  
չկայ։ Զոր օրինակ դուք քաղաքային վարչութեան  
հետ կազարման երեք տարով ապրու համար պայմա-  
նաւորուել էք տարեկան 6500 ռուբլի վարձագնով։  
Նախապէս պահանջել և ստացել էք 3000 ռուբլի,  
իսկ պայմանի մէջ նշանակել էք տուել տարեկան 5500  
ռուբլի։ Արգեօք ուղի՞ղ է այս և եթէ այո՛, ո՞ր մա-  
տեանում և ում հաշուին է զրուած 3000 ռուբլին։

Զ. Բենդերեան և Ալեքսանդրեան փողոցների  
անկիւնում շինուած է եղել ի հնուց մի կազարմայ  
զինուորների համար հանդերձ զինուորական եկեղե-  
ցիով։ Այդ կազարմայի համար տարեկան վարձ ստա-  
ցուելիս է եղել 4000 ռուբլի։

Դուք այդ կազարման վերամել էք թէյարանի,  
այն՝ որ կոչւում է այժմ «չայնոյէ զաւեկենիէ  
Մոսկուա»։ Դուք կազարման յարմարեցրել էք թէյ-  
արանի առանց շէնքը քանդելու. դրա վրայ՝ ասում  
են, Դուք ծախսել էք ոչ աւելի քան 4—6 հազար  
ռուբլի։ Այդ կերպարանափոխութիւնը կատարելուց

յետոյ Դուք թէյարանը տուել էք բակալէնիկին վար-  
ձու տարեկան միան 2700 ռուբլու։ Այս մէկ էր կ-  
րորդ՝ և որ զիսաւորն է, Դուք ծեր յաջարարու-  
թէան մէջ ի սինօդն թէյարանի վերածուած կաղար-  
ման ներկայացնուած էք իբրև բոլորովին նոր շէնք  
«նորաշէն խանութք և բնակարանք» որի  
վրայ ծախսել էք 17,135 ռ. 73 կոպ. (Մի ուրիշ  
տեղ գրած էք 18409 ռ. 67 կոպ.): Բացատրեցէք  
խնդրեմ, հայր սրբազն, արդեօք ուղիղ է այս բո-  
լորը, եթէ այս, ինձ կմնայ կարապ ետ վարդապետ  
ծեր շեշտած 65 կոպ է կի յանցանքն լիշել ու  
բացականչել «ով բարեկը, ով ժամանակներ»։


Է. Դուք ատրիներ յառաջ ես լուր ունեի, որ  
Դուք, սրբազն տէր, միանուագ ծեր հայրենի  
տունն էք զրկել Քիշնեից ոչ թէ 1, 2, 3, 4, 5, 6,  
7, 8, այլ աւելի հազար և լիշելով Ա. Աւետարա-  
շ, այլ աւելի հազար, բարոյական պարտք էք դրել Զեր-  
նից տնտեսի առակը, բարոյական պարտք էք դրել Զեր-  
եղբարց վրայ, որ ծախորդ օրերում «ընկալցին զծեղ  
յարկի իւրեանց» և պահեն ախակէս, ինչպէս որ ապրել  
ի յարկի իւրեանց» և պահեն ախակէս, ինչպէս որ ապրել  
է յակարութէամբ այդ փոքրիկ նուերը փոստին չէք  
ուստի տնտեսութէամբ այդ փոքրիկ նուերը փոստին չէք  
հաւատացել, այդ յատուկ հաւատարիմ սուլինդակի  
ծոցերով էք հասցը Ա. Աւետարի գիւղը։

Արդեօք այս էլ ուղիղ է, թէ զրպարառութիւն։  
Երանի թէ զրպարառութիւն լինի։ Բայց եթէ ուղիղ  
է, արդեօք ժամանակը չէ որ Դուք ծեր բարզում  
հոգսերը թողնէք և գնաք հանդիստ առնելու ծեր  
հայրենի տանը, որ բարոյակէս պարտաւոր է ծեր  
պահել։

Հ. Ինչպէս իւր աեղումն ակնարկեցի և այժմ յա-  
ռաջ էծ բերում կարապետ վարդապետի պացատրու-  
թիւնից», Դուք Պետերբուրգ դնալզալու ծախուց չա-  
փաղանցութէան մէջ էք մեղազրւում։ «Վաս չէր լի-  
նի ի հարկէ, որ այդ գէպքում ի միջի այլոց իւր  
(Յուսիկ սրբազնը) նանապարհորդութիւնները օրի-  
նակ բերեր, ցոյց տար թէ 1898 թուին, իբրև Բե-  
տարարիայի թեմի կառավարիչ կատարած նահա-  
պարհորդութէան համար բացի Քիշնեի կոնսիստո-  
րիայից ստացած 662 ռուբլուց և Պետերբուրգի ե-  
կեղեցական խորհրդի ծախսած 800 ռուբլուց՝ միւս  
քաղաքներում ի՞նչ ծախքեր են եղել. խնդրէր նաև  
նորից քննել սինօգում կայացրած իւր հաշիւճերի  
գործը» («Հովիւ» 1906, չ 19):

3625 (1004  
31403)

Զեր կոնսիստորիային տուած թղթից երևում  
է, որ Դուք 1895 թուի Մայիսի 20-ին Քիշնեից  
նանապարհ ընկնելով հասել էք Մոսկուայ, իշել հիւ-  
րանոց և 25-ին լճակունել Վեհափառ Կաթուղիկո-  
սին։ Մեր տեղեկութիւններից էլ երևում են, որ Դուք  
Վեհափառ Հայրապետի շքախումբն էք մտել, ուրեմն  
այլ ևս ոչ մի ծախք չէիք կարող ունենալ և չէր  
ունեցել։ Մոսկովում Դուք երկու օրուայ հիւրանոցի  
ծախք կունենայիք, մէկ էլ Քիշնեից Մոսկուա հաս-  
նելու ծախք։ Զեր վերադարձն էլ ծեր համար ծրի-  
եղած պիտի լինի իբրև շքախումբի անդամ։ Այնուամե-  
նայնիւ Դուք պահանչել և ստացել էք կոնսիստորիա-  
յից ոչ թէ 800 ռուբլի, ինչպէս կարապետ վարդա-  
պետն է ասում սիսլմամբ, այլ 845 ռուբլի 90 կո-  
պէկ։ Այդ ծախսից հեռազիրների բաժին էք հանում



17 ռ. 90 կոպ. Վեհափառի ծովային նանակարգորդութեան ձախք մինչև Փօթի 255 ռ. մնացեալ 575 ռուբլին ձեղ համար էք ստացել։ Պարզեցէք, սրբազն հայր, արդեօք տեղ կար 575 ռուբլի ձախսելու, թէ այս բոլորը թիւրիմացութիւն են կամ զբարառութիւն։

թ. 1898 թուին վեհափառ կաթոլիկոսի հրամանով Դուք գնացել էք Մոսկով, Պետերբուրգ: Մոսկովյան Դուք մատուցել էք շատ կարծ ժամանակ: Ձեր բոլոր ծախքերը հոգացել է եկեղեցու վարչութիւնը թէ մասն թէ խոշոր, նոյն խակ ճանապարհածախքը դէպի Պետերբուրգ: Ընդ ամենը 74 ռուբլի 10 կ. (Յունուարի 8—11): Ի դէպ. այդ հաշումի մէջ մի 26 ռ. 96 կոպէկ կայ, որի գիմացը զրած է «отправка денегъ и телеграммъ въ Эчмиадзинъ и консисторию, расписка у епархialьного начальника»: Այս բանը մութ բան է և բացատրելի: Դուք հասնում էք Պետերբուրգ Յունուարի 12-ին կարծեմ և մնում էք այնտեղ մինչև Մարտի 12-ը: Հաշումից չի երևում որ Դուք հիւրանոց իջած լինիք, որովհետեւ բնակարսնի վարձ չկայ և ձեզ համար առանձին խոհարարուհի է վարձուած եղել, հետեւաբարերեւի Դուք բնակուելիս էք եղել եկեղեցական աներում: Եկեղեցու վարչութիւնը ձեր բոլոր ծախքերն ինքն է արել վակզալից Զեղ ընդունելիս մինչև վակզայ տանելը:

Զարմանալի քննչութեամբ է հոգացուած ձեր  
ծախքերը. մինչև անգամ չեն թողել որ Դուք նո-  
սիլ չեկի, կառքի, «Новое Время» թերթի հա-

մարների փող տաք. բոլորն իրենք են արել: Այդաեղ Ձեր պահպանութեան համար, այսինքն ուտել-խմելու, շրջելու, կարգալու, առանց բնակարանի, ճախսուած է 210 ռուբլի: Քիչնե վերադառնալով Դուք սուազագրութիւն էք տալիս կոնսիստորիային և պահանջում ու ստանում էք 662 ռուբլի: Ասացէք սրբադան հայր, արգեօք ո՞ւր, ինչպէս է ճախսուած այդքան գրամք: Գրում էք թէ Վարշաւ էլ գնացի «այցելելով ժողովրդեան մերում»: Պոնէ զիտենայինք թէ Վարշաւում քա՞նի հայ կայ և քա՞նի եկեղեցի:

Ավագ զիակէ, սրբազնան հայր, երբեմն թղթերի և  
հաշիւների մէջն էլ սխալներ են սպառառւմ. զուցէ այս  
թուերի մէջ և նկարադրութեան սխալներ են մաել,  
խնդրում եմ բացատրէք, ուղղէք: Իսկ այդ բանը  
կուղղուի, երբ Կարապետ վարդապետի խորհուրդը  
լուէք և ձեր հաշիւները նորից քննել տաք:

Ժ. Կոնսիստորիայի շինութեան գործը միայն  
ձեզ վրայ առնելով Դուք ծախսել եք շէնքի վրայ  
4281 ռ. 12 կոպէկ. պարապների և այլ վերանո-  
րոգութեանց առաջնորդարանի) 784 ռ. 50 կոպ.  
ընդ ամենայն 5065 ռ. 62 կ. Ոչ ոք չի կասկածում  
այս հաշուի նշառութեան վրայ, բայց և այնպէս ձեզ  
համար լու է, որ կրկին քննել ապա:

ԺԱ. Պատմում են որ 1896 թուին երբ Դուք  
տեղական դրամատանը 9000 ռուբլի փող ունեիք,  
Զեր ծառայ ան պիտ ան Կարապետը (Ղարաբաղ-  
ցին) չերերի տեսրակից երկու չեր է կարում, կեզ-  
ծում ձեր սառրադրութիւնը և դրամատնից սասա-  
նում է 1400 ռուբլի:

Երբ Դուք իմանում էք՝ աղային հարկաւ բանան  
էք գնել տալիս, կորուսար զցում էշմիածնի հաշուին:  
Վերջի վերջոյ Դուք՝ միամառութեամբ խարուած դրա-  
մասան ձառապողներից՝ կարծեմ երկու օրիորդներից,  
որոնք կեղծիքը չեն նկատել ու փողը բաց են թո-  
ղել, 1400 ռուբլին սասացել էք, կոկծաղին լալով  
թողնելով նրանց: Բայց արգեօ՞ք այդ կորուսար վե-  
րադարձնելուց լետոյ փողը մասն էշմիածնի հաշիւ-  
ների մէշ, թէ 1400 էլ էշմիածնիր Ձեղ պարտ մնաց:  
Այս խնդիրը ինչպէս աւեսնում էք մի փոքր նուրբ  
խնդիր է և լուսաբանութեան կարօտ: Սրբազն տէր,  
եթէ զրպարառութիւն կայ ալսաեղ դործի վերաբնոււ-  
թեամբ կարկեցէք զրպարախների լմզուն:

ԺԲ. Կան նաև արտաքնոցների շինութեան հո-  
շիւներ, մայթերի շինութեան հաշիւներ, դորս պէտք  
է պարզել: Ի դէպ. պատամում են որ Դուք մերժ-  
լնդ մերթ նուէլներ էիք տալիս ծեր շրջապատի  
մարդկանց և երբ հարցնելիս են եղել թէ «ո՞ւր, ո՞ր  
հաշուի մէջ պիտի մացնէք մեղ սոււած պարզեները»  
սովորաբար պատասխանել էք. «Միլլէթ սաղ օլուն,  
փողը կդրեմ հաշուէմատենում թէ արօտուար շինե-  
ցինք ծախսուեցաւ 700 մանէթ»: Պատամում են նոյն-  
պէս թէ ծեր՝ առատութեան մէջ ապրելու ժամա-  
նակ տաճկահայ զաղթականները երբ զիմում էին  
ծեղ ողորմութիւն ուզելու, Դուք սասափիկ սրբողած  
վանտում էիք ետևներիցը կանչելով. «Սուլթանի հէրն  
անիմած, որ ծեր քօքը չկտրեց»: Զգիտեմ ուղիղ են  
այս բաները թէ չէ, այդ քննութիւնը միան կարող  
է պարզել, բայց երբ ուզում եմ հաւատալ՝ երես-

կայութեանս տոչև պատկերանում էք Դուք, աղջա-  
մէր սրբազն հայր, մտրակ ի ծեռին հայ ժողովրդի  
թշուառ մնացորդի ետևիցը վագելիս զլխապատառ,  
իսկ հեռուում մանկիւնումը ծեռքերը կրծքին զր-  
բած արհամարհական ժային երեսին դէպի ծեղ գար-  
ծած կանդնած կարապեա վարդապեաբն. Դուք վա-  
զում էք դէպի նա և ծեր մտրակը զաղում է մի  
կարմիր շերտով նրա բարձր նակաար և Դուք բզա-  
ւում էք. «այ գու անպիտան, աղքատների փողից  
65 կոպէկ կերել ես, մեղք չեն նրանք...»:

Ես այսքանով առ այժմ բաւականանում եմ,  
սրբազն հայր, յուսուլով թէ էլ մտրակ շարժելու  
չէք արժանաւոր վարդապեաների զիին, որոնց գուր-  
դուրելու, փայփայերու, պաշտպանելու բարյական  
պարտաւորութիւնն ունիք, իբրև նրանց սրբազան  
հայրը: Ես այսաեղ զեռ ծեղ չեմ մեղադրում, այլ  
ծեր զործերից տարակուսանքներ շարելով, ծեղ խրնդ-  
րում եմ քննութեամբ միայն սինօդին բացատ-  
րել թէ ծեր վրայ բարկուող տարակուսանքներից ո՞րն  
է ուղիղ և որը բամբասանք: Իմ աչքումս առաւել շատ  
կասկածի տակ են ծգում ծեղ ո՞չ թէ ծեռքումս ե-  
զած փաստաթթերը, որոնք շատ էլ չեն, մի փո-  
խէնաք, այլ այն՝ որ ծեղ նման կարգապահ մարդու-  
զործելը ցաքու ցրիւ, թափթփած են և որ զլխա-  
ւորնէ հաշուէմատեաններով հանդերձ չկան: Երևի  
սինօդ էք տարել, ահա այդ հաշուէմատեանների քննու-  
թիւնն է, որ ծեղ կմաքրէ կասկածներից և դուք իրա-  
ւունք կունենաք նորից մտրակ վերցնելու: 0-, երևա-  
կայում եմ թէ ինչ կլինի իմ խեղճ մարմնիս հալը:

Այժմ մի ուրիշ խնդիր պէտք է շօշափեմ, որ հարկաւ սերտ կապ ունի վերևութիւնն արձարձուած խնդիրների հետ:

Ի՞նչպէս է եղել որ ձեր գործունէութեան վրայ սրբազն սինօղը ուշք չի դարձրել և եթէ դարձրել էլ է, միայն ձեր կարգադրութիւնները կաւերացնելու, սրբագործելու համար: Մինչդեռ այժմ տեսնում ու կարդում ենք «Սրարատում» որ սինօղը ոչ միայն զեղծութեան վրայ ուշք է դարձնում, այլ նոյն խսկ մարմնաւոր իշխանութեան դասախն է յանձնում իւր վարդապետներին և կարի վիրաւորական բառերով ապում նրանց մասին «Սրարատում»:

Այս առթիւ պէտք է ասեմ նախ. «օրէնք ի ձեռս առաջնորդաց են»: Զկայ մի կատարեալ օրէնք, որ ապահովէ արդարութիւնը, եթէ օրէնք գործադրողների հոգու մէջ արդարասիրութիւնը չի թագաւորում, եթէ «առաջնորդք օրինաց» հոգով բարձր մարդիկ չեն: Հրէտական օրէնքն էլ պատիժ էր նախասահմանում աւագակին և պաշտպանութիւն՝ անմեղին. բայց Աննան ու Կայիափան՝ օրէնքի առաջնորդողները վճռեցին աւազակ Բարձրացին բանափին ազատել, իսկ մարմնացեալ անմեղութիւն թիսումին ի խաչ հանել:

Երկրորդ՝ սրբազն Տէր, Դուք այն անձնաւորութիւններից էք, որոնք բաղդաւոր ասազի տակ են ձնուում: Ձեր նկարեալ գործունէութիւնից իետոյ անմիջապէս Դուք սինօղի անդամ դարձաք և յանժամանական կազմը մտաք: Ուրեմն երէկ ստորագրեալ գործիչ և զեկուցող, այսօր իշխան, դատա-

ւոր և վաւերացնող: Էլ ինչպէս կարող էր ձեր դորձունէութեան վրայ կասկած խսկ ընկնել: Միւս կողմից էլ Դուք ապահովել էիք ձեզ և թիկունքից. Քիշնեում կալուածական կառավարութիւնը և թեմը թողիք բարեկամ, բարերարեալ մարդոց, որոնք ձեր շնորհիւ պէնսիա են ստանում էշմիածնից և ձեղնից՝ իբրև առաւել բարձր իշխանից, քաշում էին ակնկալութիւններով հանգերձ:

Այսպիսով մոռացութեան մէջ թաղուեցաւ, ծածկուեցաւ ձեր գործունէութիւնը, և զուրար մնաց միայն արտաքինով զեկեցիկ Յուսիկ սրբազնը, որին առաջարկուեցաւ նախ Երեսնի թեմը, իսկ այժմ Աստրախանի ժաղավրդի իմաստուն ընարութեամբ բարելիշատակ Սեղբակեան սրբազնի աթոռն է առաջարկում ձեզ, որպէս արժանաւոր յաջորդի:

Ես լրութեան եմ տալիս մթութեան մէջ հիւսուող և հրապարակի վրայ երեցող շատ ուրիշ ամօթալի մարակահարութիւններ, որոնք՝ սխալ թէ ուղիղ, ձեր անձի հետ են կապւում:

Ներեցէք խնդրեմ, եթէ վիշտ պատճառեցի ձեզ. այս իմ ցանկութեան հակառակ էր և յառաջ եկաւ ձեր անարդարութեան երեսից, որ գամանութեամբ գործ զրիք առանց էն էլ ամեն կողմից խարազանող Կարապետ վարդապետի վրայ, որի գէմ յարուցուած հալածանքից Դուք նրան պաշտպանելու պարտաւորութիւնն ունէիք:

Ես խնդրում եմ Ձեզ ձեր գործերը քննելու համար ինքներդ զիմումն անէք սրբազն սինօղին և արդարանաք. շատ ուրախ կլինեմ որ արդարանաք. այն

ժամանակ ես իբրև խաթուած, իբրև անփաստ զլրպարտութիւնների զո՞ն, կթողնեմ, կհեռանամ մի անապատ, ծնկաչոք թողութիւն խնդրելով Զեղնից հրապարակաբար:

Ես լիալոյս եմ, որ Դուք ինդիրս կկատարէք: Զկատարէք էլ, ես ձեծ յոյս եմ դնում սինօդի ալժման կաղծի վրայ: Սրբազն սինօդը, որ զեղմումները վերայնելու հետամուտ է այժմ, շատ կրօնաւորների և քահանաների գասի է առուել ու տալիս է, ուշը կդարձնի իմ զրածներիս վրայ: Ինձ իւր ատեանը կհրաւիրէ, լրացուցիչ բացատրութիւններ կունծնից և քննութիւն կնշանակէ:

Միայն մի բան՝ որ հոգուս հակառակ է, և իմ համեստ կարծիքով սխալ, այդ այն է, որ Սրբազն Սինօդը իւր կրօնաւորներին և քահանաներին աշխարհիկ գատարանի է առլիս: Իմ աղերսս այս կինէր, որ Սրբազնութեանդ գործը աշխարհիկ ատեան չմընէր: Իսկ եթէ մանի, խօսք եմ տալիս ձեզ, հայր սրբադան, լուել, չպաշտպանուել նոյն իսկ ծածկել փաստերը, որ զուք արդարանաք, եթէ միայն ինձ վտանգի չբերէք որպէս զբարտչի: Ինչու, ուղցէ հասրցնէք: Ես ներկայ եմ եղել նահանգական դատարանում երբ գատում էր Զեր ընկեր Սաթունեան Գարեգին սրբազնը: Օտար հասարակութեան արհամարդնանքի առաջ գատապարտեալի նստարանի վրայ նստած հայ եպիսկոպոսը, որի վրայ գատախաղի անարգական նառն է թափեռում, կարի վիրաւորական է, առաջանելի: Այդ տպատորութիւնը այնպէս է զրոշմուել ինձ վրայ, որ չէի կամենայ նոյն իսկ որ

նոյն Սաթունեան սրբազնը կրկին անդամ մտնէր աշխարհիկ դատարան:

Սրբազն սինոդը լիտկատար իրաւատէր է իւր կրօնաւորին ըստ չափու յանցանաց պատժել: այսինքն յանդիմանել, նախատել, ապաշխարութեան ենթարկել, փիլոնադուրկ անել, ասպարիզից հանել և վերչառէ կարգադրութեան անել:

Իմ աղերսս այս է սինօդից և այս կինի երբ, յուսամ թէ, Սրբազն ատենում կհանդիպինք իրար:

Ես այժմ վերջացնում եմ խօսքս ու ձեր անարդարութեան երեսից առ Կարապետ վարդապետեար երես գարձնելով՝ աչքս ուղղում եմ դէպի արդարադատութեան ատեանը:

1907թ. թ. 15 Փետրուարի  
Քիշնե

## ՅԱԻԵԼՈՒԱԾ

«Հովիւ» շաբաթավերթի անցեալ սւարուայ  
համարներից մէկում յարգելի խօմբազրութիւնը ցան-  
կութիւն էր յատանել, որ ես Քիչնեի էջմիածնական  
կալուածոց պատմութիւնը դրեմ և «Հովուի» էջե-  
րին յանձնեմ: Երկար ու բարակ մտածելուց յետոյ՝  
եկայ այն եղրակացութեան, որ փաղաժամ է այդ:  
Ուստի երբ Յուսիկ սրբազնը առիթ տուաւ այս  
աետրակը հրատարակելու, բաւական համարեցի 32  
տարուայ արգեանց տախտակն ալսաեղ գեաեղելու,  
որպէս զի թուերն տւելի խօսեն քան արձանա-  
դրողը:

Տախտակից պարզապէս նկատուած է մի բան.  
այսինքն՝ ինչ որ Յուսիկ սրբազնը պահանջում էր  
Գրիգոր սրբազն Ազափիրեանից, այն է թէ՝ անփա-  
յել է առաջնորդ մարդուն կալուածական գործով  
զբաղուիլ և վարձակալ հրէաների հետ առեւտրի մէջ  
մտնել, և զոր ինքը՝ Յուսիկ սրբազնը չկատարեց,  
երբ թէմի կառավարիչ դարձաւ, ընդհակառակն հով-  
ութիւնը մի կողմ զնելով բառի բուն նշանակու-

թեամբ կաղուածքի ուպրտւ լեա իւշչի գարծաւ,  
նոյնը իրագործեց Ներսէս արքեպիսկոպոսը: Վերջինս  
աշխարհիկ վարձակալի յանձնելով կաղուածոց կառա-  
վարչութիւնը, եկեղեցականներին խճքանքից՝ իսկ  
կաղուածքը զեղծումներից աղաւեց: Այժմ կաղուած-  
քից ստանում է ո. էջմիածինը տարեկան 24 հազար  
ռուբլի դուռ արդիւնք և կաղուածքի վրայ աւելա-  
նում է տարեկան 15 սամէն երկարութեամբ շէնք  
յօդուա ո. էջմիածինի. այնպէս որ սկամանածամք  
լրանալուց դինի ո. էջմիածինը տարեկան 100,000  
ռուբլի դուռ արդիւնք կունենայ:


1903—5 թուականներին թեմի եկեղեցական  
գումարները յայտնի է թէ կուռափարութեան ձեռ-  
քումն էին: Թեմական տաեանը իւր դոյտթիւնը  
զրկանքներով է պահել բայց իւր պարտքն առ ո. Ա-  
թոռ լաւ է կատարել:


Կաղուածոց վերսպարձման կայսերական կար-  
գալը թիւնն ստանալուց յետով, Ներսէս աշքեպիս-  
կոպոսը տմենայն չանք դործ է զրել զրամների ստա-  
ցումն արագացնել, որպէս զի ո. էջմիածինի այս  
թշուառ օրերում նրան յօդնութիւն փութայ: Վեր-  
ջին 14 ամսուայ ընթացքում Ներսէս արքեպիսկո-  
պոսը ո. Աթոռին է զրել պետութիւնից ստացած  
ու թեմից գանձած 88,019 ռուբլի:

Այս մի քանի խօսքը մեր «Յաւելուածին» կցե-  
լով, Ներսէս սրբազն արքեպիսկոպոսին ներբողելու  
միավը չունիմ ամենեին. նրա անցեալ ծառայու-  
թեանց վկայաբանութիւնը ինձնից աւելի լաւ զիաւ-  
ցողներին թողնելով, ես կամեցալ շեշտել այստեղ թէ


նու վերջին ապրում, իմ ներկայութեամբ որպիսի ժա-  
ռայութիւն է արել ո. էջմիածնին, մինչզեռ չար նա-  
խանձուառութիւնը ափեղ թղթակցութիւններով  
լրագրութեան մէջ, արտատառոր բանսարկութեամբ  
սինօղի մէջ, փորձում է ստուեր ծգել այդ գործու-  
նէութեան վրայ, որ կատարեալ անբարեխնութիւն է:











## տղեռանմոխ լգապետ Մովսիսեան

## Առաջնորդություն

Պապետ Սուքիասեան

## ԱՅս արքեպիսկոպոս

Եպիսկոպոս

այր Վարդապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ

• 3 - 4 p] - u p] o 3 m o


•Վաղարշակ Հվանդիս


<sup>2</sup> Այս երկու տարրուան հաշիւներից և  
ոչ մի կտոր թուղթ կայ:

<sup>3</sup> Այս գումարից իբր թէ ծախսուել է  
„Մոսկովա“ թէյարանի վրայ 18,409 ռ. 67  
կոպ.

4 Սինողի հրամանով շինուել են Շվարց-  
մանի այժմեան վարձած չորս խանութ-  
ները:

5 1902 թ. Յուլիսի մէկից կալուածքը  
վարձու արուել է հրէայ Ռէյդելին 24 տա-  
րի ժամանակով, տարեկան 24 հազար  
սուրբի զուտ արդիւնքով յօգուտ Ս. Էջ-  
միածնի. վարձակալը պարտաւորում է  
նա և հոգալ բոլոր ծախքերը և տարեկան  
15 սահմէն քարուկրեայ շինութիւն կա-  
րուցանել կալուածքի ճականներում յօ-  
գուտ Ս. Էջմիածնի:





204

204

3615



